Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 111- Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԲՈՒԺՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում ամբուլատոր փուլում բուժում ստացող տուբերկուլյոզով հիվանդներին և նրանց ընտանիքի անդամներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տուբերկուլյոզով հիվանդների շրջանում տուբերկուլյոզի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով նախատեսված արտոնություններից:
3.	Բարեգործը	Ձեռք բերովի Իմունային Անբավարարության Համախտանիշի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Քաղաք Երևան և Հայաստանի Հանրապետության մարզեր, բնագավառը՝ առողջապահություն
6.	Ծրագրի բյուջեն	11,390,000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Երևանի և Հայաստանի Հանրապետության մարզերի տուբերկուլյոզով հիվանդները և նրանց ընտանիքի անդամները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի փետրվարի 13-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ ուղղություններով՝ 1. Սոցիալ-հոգեբանական աջակցություն տուբերկուլյոզով հիվանդներին և նրանց ընտանիքի անդամներին, մասնավորապես անհատական տեղեկատվական բնույթի հանդիպումների կազմակերպում տուբերկուլյոզի վերաբերյալ, հոգեբանական և սոցիալական խորհրդատվության տրամադրում՝ 6,060,000 դրամ ընդհանուր արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 13-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը, որի համար հարկային արտոնություն չի ակնկալվում. 2. Տուբերկուլյոզով հիվանդներին սննդային փաթեթների տրամադրում 2,930,000 դրամ ընդհանուր արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 13-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը. 3. Տուբերուլյոզով հիվանդների և նրանց ընտանիքի անդամների դասընթացների կազմակերպում՝ 600,000 դրամ ընդհանուր արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 13-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը. 4. Կազմակերպչական ծախսեր՝ ներառյալ աուդիտորական ծառայություն, մեքենայի պահպանման ծառայություն և վառելիքի ձեռքբերում՝ 1,800,000 դրամ ընդհանուր արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 13-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Մննդային փաթեթների ձեռքբերում՝ 2,930,000 դրամ: 2. Տուբերկուլյոզով հիվանդների և նրանց ընտանիքի անդամների համար դասընթացների և տեղեկատվական հանդիպումների ընթացքում հյուրասիրության համար նախատեսված սննդի ձեռքբերում ՝ 600,000 դրամ. 3. Ծրագրի աշխատակազմի և կամավորների հեռախոսակապի ծառայությունների փոխհատուցում՝ 660,000 դրամ. 4. Վառելիքի ձեռքբերում և մեքենայի պահպանման ծախսեր՝ 600,000 դրամ. 5. Աուդիտորական ծառայության ձեռքբերում՝ 1,200,000 դրամ:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Ծրագրի կազմակերպչական ծախսեր, ընդհանուր 1,800,000 ծախսեր՝ ներառյալ աուդիտորական ծառայության ձեռքբերում՝ 1,200,000 դրամ և վառելիքի ձեռքբերման ու մեքենայի պահպանման ծախսեր՝ 600,000 դրամ արժողությամբ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Երևանում և Հայաստանի Հանրապետության մարզերում պոլիկլինիկաների և ամբուլատորիաների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել հաշվետվություններ բարեգործությունն իրականացնող կազմակերպությանը, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66 - Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

10.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ